## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

## ԹԿՎԿ-ԳՀԱՊՁԲ-19/21 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան «18» հոկտեմբերի 2019թ.

2019թ-ի հոկտեմբերի 14-18-ին՝ ժամը 10:20-ին, ՀՀ, ք. Երևան, Փ. Բյուզանդի փ. 1/3 շենք հասցեում գտնվող «Թափառող կենդանիների վնասազերծման կենտրոն» ՀՈԱԿ-ի վարչական շենքում տեղի ունեցավ ԹԿՎԿ-ԳՀԱՊՁԲ-19/21 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) նիստը: Հանձնաժողովի նիստին մասնակցում էին՝

Հ. Առաքելյան «Թափառող կենդանիների վնասազերծման կենտրոն» ՀՈԱԿ-ի փոխտնօրեն՝ նախագահ.

Վ. Գալուստյան «Թափառող կենդանիների վնասազերծման կենտրոն» ՀՈԱԿ-ի Գլխավոր հաշվապահ՝ անդամ •

Վ. Սուքիասյան «Թափառող կենդանիների վնասազերծման կենտրոն» ՀՈԱԿ-ի գնումների համակարգող՝ քարտուղար:

Հաշվի առնելով, որ հանձնաժողովի կազմը բաղկացած է 3 անդամից և նիստին մասնակցում էին հանձնաժողովի 2 անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Հ. Առաքելյանը, իսկ քարտուղարն էր՝ Վ. Սուքիասյանը:

### ՕՐԱԿԱՐԳ

1. ԹԿՎԿ-ԳՀԱՊՁԲ-19/21 ծածկագրով գնման ընթացակարգի մասնակցի կողմից ներկայացված հայտի՝ հրավերի պահանջներին համապատասխանության գնահատման արդյունքների հաստատման մասին:
2. ԹԿՎԿ-ԳՀԱՊՁԲ-19/21 ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից հայտարարելու մասին:
3. Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հաստատելու մասին:

### 1. ԹԿՎԿ-ԳՀԱՊՁԲ-19/21 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿՑԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԻ՝ ՀՐԱՎԵՐԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Զեկուցեց քարտուղար Վ. Սուքիասյանը՝ հայտնելով, որ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրվել է ԹԿՎԿ-ԳՀԱՊՁԲ-19/21 ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին տեղը զբաղեցրած մասնակցի ֆինանսական միջոցների հարցման մասին տեղեկատվություն, որը քարտուղարի կողմից նույնությամբ ներկայացվել է հանձնաժողովի անդամներին: Մասնակցի կողմից սահմանված ժամկետում չի ներկայացվել հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը:

Որոշվեց՝

1. Նիստը կասեցնել 3 աշխատանքային օրով:
2. Քարտուղարին՝ ծանուցել «Գլոբմեդ» ՍՊԸ-ին՝ սահմանված կարգով տալ արձանագրված անհամապատասխանությունը՝ ներկայացնելով հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը:

Հանձնաժողովն արձանագրեց, որ.

1. «Գլոբմեդ» ՍՊԸ-ի կողմից սահմանված կարգով ներկայացվել են պահանջվող փաստաթղթերը:
2. ԹԿՎԿ-ԳՀԱՊՁԲ-19/21 ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով 1-ին տեղը զբաղեցրած «Գլոբմեդ» ՍՊԸ-ի որակավորման չափանիշները բավարարում են հրավերով սահմանված պահանջներին:

Որոշվեց՝

1. Վ. Սուքիասյանի կողմից ներկայացված տեղեկատվությունն ընդունել ի գիտություն:
2. Հաստատել ԹԿՎԿ-ԳՀԱՊՁԲ-19/21 ծածկագրով գնման ընթացակարգի մասնակցի կողմից ներկայացված հայտը՝ հրավերի պահանջներին համապատասխանության գնահատման հետևյալ արդյունքները.
1) «Գլոբմեդ» ՍՊԸ-ն՝ բավարար.

Կողմ՝ 2
Դեմ՝ 0

## 2. ԹԿՎԿ-ԳՀԱՊՁԲ-19/21 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԸՆՏՐՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Որոշվեց՝

1. ԹԿՎԿ-ԳՀԱՊՁԲ-19/21 ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով ընտրված մասնակից հայտարարել «Գլոբմեդ» ՍՊԸ-ին:

Կողմ՝ 2
Դեմ՝ 0

## 3. ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՔՍՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղար Վ. Սուքիասյանը ներկայացրեց պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստի նախագիծը:

Որոշվեց՝

1. Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը՝ համաձայն հավելվածի:

Կողմ՝ 2

Դեմ՝ 0

Հանձնաժողովի նախագահ՝

Հ. Առաքելյան

Հանձնաժողովի անդամներ՝

Վ. Գալուստյան

Հանձնաժողովի քարտուղար՝

Վ. Սուքիասյան